



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է ԳՐԻ ԳՈՐԾԱՆ

*[Handwritten signature]*



« 28 » 2019թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000065

**Ձեռնարկողը՝**

«2020 ԱՐԱԲԿԻՐ» ՍՊԸ  
Ք. Երևան, Ա. Խաչատրյան 3

**Գործունեությունը՝**

Արաբկիր վարչական շրջանի Ա. Խաչատրյան փողոց 3/4,  
3 ԿՋՀ և 1/5 բնակելի տուն հասցեներում նախատեսվող  
բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա  
միջավայրի վրա ազդեցության նախնական գահատրման հայտ  
Քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



*[Handwritten signature]*

Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000065

<14> 08 2019թ.

**Արաբկիր վարչական շրջանի Ա. Խաչատրյան փողոց 3/4, 3 ԿՋՀ և 1/5  
բնակելի տուն հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի  
համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝ «2020 ԱՐԱԲԿԻՐ» ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/  
Տեղադրման վայրը՝ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան

«2020 ԱՐԱԲԿԻՐ» ՍՊ ընկերությունը նախատեսում է ք. Երևան Արաբկիր վարչական շրջանի Ա. Խաչատրյան փ. 3/4, 3 ԿՋՀ և 1/5 բնակելի տուն հասցեներում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր: Բազմաբնակարան բնակելի համալիրի նախագծման համար Երևանի քաղաքապետարանի կողմից տրվել է № 01/18-07/1-Դ-623-233 առ 08.04.2019թ. նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), որի համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականները (կադաստրային ծածկագրեր՝ 01-003-0021-0233, 01-003-0021-0003, 01-003-0021-0028): Վկայականներով ամրագրված հողամասը զբաղեցնում է ընդհանուր 0.41989հա մակերես, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատում: Բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Գործունեության ենթակա տարածքում առկա են քանդման ենթակա շինություններ /կաթսայատուն, կրպակ, պոմպակայան, որոնք կհասքանդ վիճակում են/, որի քանդման համար քաղաքապետարանի կողմից 07.05.2019թ տրվել է № 01/18-դ-728-36 թույլտվություն:

Համաձայն նախագծի բնակելի համալիրը բաղկացած է 3 մասնաշենքերից: Մասնաշենքերը նախագծված են 3 ստորգետնյա և 11-ից 16 վերգետնյա հարկերով՝ հողամասի հյուսիս-արևմտյան հատվածամասից դեպի Ա. Խաչատրյան փողոց՝ յուրաքանչյուրը 2 հարկ նահանջով: Շինության կառուցապատման մակերեսը կազմում է 2550քմ, իսկ ստորգետնյա կառուցապատման մակերեսը՝ 2580քմ: Ընդհանուր կանաչապատման մակերեսը կկազմի հողամասի մոտ 40%-ը: Կառույցը նախագծվել է ժամանակակից լուծումներով և նյութերով՝ շրջակա կառույցներին ներդաշնակ:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի ընդհանուր մակերես՝ 0.4198 9հա,
- կառուցապատման մակերես՝ 2550քմ,
- ընդհանուր կանաչապատման մակերես՝ 1649քմ,
- կառույցի ընդհանուր շինարարական մակերես՝ 33420քմ,





- հասարակական տարածքների ընդհանուր մակերես՝ 1370քմ,
- բնակելի ընդհանուր մակերես՝ 17943քմ,
- բնակարանների քանակ՝ 217 հատ,
- ստորգետնյա ավտոկայանատեղի՝ 166 մեքենայի համար:

Շինության կոնստրուկտիվ համակարգն իրենից ներկայացնում է ե/բ շրջանակային հիմնակմախք: Ծածկերը միաձույլ ե/բ սալեր են՝ 200 մմ և 160 մմ հաստությամբ: Արտաքին պատերը կանոնավոր ձևի բետոնե բլոկների շարվածքով են, հիմքերը՝ ե/բետոնե ժապավենածև: Ճակատները նախատեսված է երեսապատել տրավերտինե սալերով և այլումինե կոմպոզիտային նյութով, իսկ առաջին հարկը՝ բազալտե սալերով: Տանիքը նախատեսված է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Բազմաբնակարան համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվելու է <<Մերգեյան>> 35/6 կՎ ենթակայանից՝ կառուցելով համապատասխան հզորության նոր ենթակայան: Ենթակայանի կառուցումը և տարածքում առկա՝ 6.0 և 0.4կվ լարման մալուխագծերի տեղափոխումն իրականացվելու է <<ԼԵՑ>> ՓԲԸ-ի հետ համաձայնեցված:

Բնակելի համալիրի ջրամատակարարումն իրականացվելու է տարածքում գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին, իսկ կոյուղին միացված է համայնքային կոյուղատարին:

Շենքի հեղեղատար կոյուղին Արամ Խաչատրյան փողոցով ուղղվելու է դեպի Հ. Հակոբյան փողոց, որտեղիցել միանում է Քեռու փողոցով անցնող՝ Փ1000 մմ տրամագծի հեղեղատար կոյուղու կոլեկտորին:

Կառուցվող բազմաբնակելի շենքի գազամատակարարումը՝ 640մ<sup>3</sup>/ժամ բնական գազի ծախսով իրականացվելու է 526մմ տրամագծի ստորգետնյա գազատարից՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության «Երևանի ԳԳՄ» կողմից 05.02.2019թ. տրվ. տեխնիկական պայմանների համաձայն: Բնակարանների ջերմամատակարարումը և տաք ջրամատակարարումն իրականացվելու է անհատական ջեռուցման սարքերի միջոցով:

Շինարարական փուլի ընդհանուր տևողությունը հաշվարկվել է 3 տարի: Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը նախատեսված է իրականացնել շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու-կենցաղային կարիքների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է 1378.62մ<sup>3</sup>/շին. որից ջրցանի համար ծախսը կկազմի 337.5 մ<sup>3</sup>/շին.ժամ. կամ 0.75մ<sup>3</sup>/օր: Շինարարության փուլի ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին:

Քանդման աշխատանքների ընթացքում կառուցապատվող հողամասում առկա՝ 650քմ կանաչապատ մակերեսի բուսահողը /200մ<sup>3</sup> ծավալով/ նախատեսվում է հանել և պահեստավորել հատուկ վայրում՝ ծածկի տակ, որպեսզի չխառնվի շինարարական աղբի հետ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո այդ բուսահողը նախատեսված է օգտագործել բազմաբնակարան համալիրի կանաչապատման աշխատանքներում: Հողատարածքում առկա 5 հատ ծառերը /որոնք չորացած են, կամ դեկորատիվ տեսքը կորցրած/ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված պետք է տեղափոխվեն, կամ հատվեն:

Ե/բ հիմքերի տեղադրման ժամանակ կառաջանա ընդհանուր 25000մ<sup>3</sup> ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 5000մ<sup>3</sup> կօգտագործվի որպես հետլիցք: Հողային աշխատանքներից առաջացող մնացորդային ծավալները սահմանված կարգով կտեղադրվեն համապատասխան աղբավայրում:

Տարածքում առկա մեկ հարկանի շինությունների քանդումից կառաջանա 1100մ<sup>3</sup> ծավալով շինարարական աղբ, որի մի մասը /փայտե կոնստրուկցիաներ, մետաղական մասեր և խողովակներ/ կրկնակի կօգտագործվի շինարարության ընթացքում, իսկ մնացած մասը՝





համայնքապետարանի կողմից տրված քանդման թույլտվության համաձայն կտեղափոխվի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի տարածքում գործող շինարարական թափոնների աղբավայր: Քանդման ենթակա է նաև 300քմ մակերեսով ասֆալտապատ շերտ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան տարածք, կամ կտրամադրվի նշված թափոնը վերամշակող ընկերությանը:

Նոր կառուցվող բնակելի համալիրի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխազագերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր: Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- պարբերաբար իրականացնել ջրցան, ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը՝ իրականացնելով կարգավորում,

- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,

- շինհրապարակում սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով:

Շրջակա տարածքների պահպանության և վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքերը կանխարգելելու նպատակով շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները նախատեսված են տեղադրել բետոնապատ մակերեսի վրա: Այն տարածքներում, որտեղ կայանելու են շինարարական տեխնիկական և տեխնիկական միջոցները, նախատեսված է պատել ավազով, կամ մանրախճով, անհրաժեշտության դեպքում փոված ավազը կամ մանրախիճը փոխարինել նորով:

Շինարարության ընթացքում հոսքաջրերի և անձրևաջրերի հեռացման համար շինհրապարակին կից նախատեսված է պարզարան, որտեղ հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական նստեցման: Պարզեցված ջուրը կրկին օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող հիմնական թափոնատեսակները կլինեն կենցաղային աղբը, և շինարարական աղբը /որի 1100մ<sup>3</sup> ծավալը կառաջանա քանդման աշխատանքներից, իսկ 20000մ<sup>3</sup> ծավալը ավելցուկային հողային զանգվածն է/, որոնք սահմանված կարգով կտեղադրվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր:

Շինարարության ընթացքում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված է շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում ցերեկային ժամերին, աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգման և կարգաբերման իրականացում:

Որպես սոցիալական հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ նախատեսված է նաև՝ շինհրապարակի հարևանությամբ ցուցանակների տեղադրում, ժամանակավոր անցուղիների նախատեսում, երթևեկության կանոնակարգում, հարակից տարածքների բնակչության իրազեկում՝ շինարարական աշխատանքների մասին և այլն:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մթնոլորտային օդի և հողի աղտոտվածություն, աղմուկ, թրթռում/: Հայտում ներկայացվել է մշտադիտարկումների իրականացման ժամանակացույցերի և ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն /տարեկան



ծախսերը կկազմեն 350.0 հազ. դրամ, իսկ ողջ շինարարության ընթացքում՝ 1050 հազ. դրամ/:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը պետք է բարեկարգվի և կանաչապատվի: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել հողային աշխատանքների ժամանակ պահեստավորված բուսահողը /200 մ<sup>3</sup> ծավալով/:

Կանաչապատումն իրականացվելու է տարածքի համար մշակված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսված է իրականացնել ոռոգման ցանցի միջոցով, որին միացումը կիրականացվի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից՝ պայմանագրի համաձայն: Ծառատեսակների ոռոգումը նախատեսված է կաթիլային ոռոգման համակարգով:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է կառուցապատվող հողամասում առկա՝ 6.0 և 0.4 կվ լարման մալուխագծերի տեղափոխման նախագծային լուծումները համաձայնեցնել ՀՀ ՓԲ ընկերության հետ:
- Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«2020 ԱՐԱԲԿԻՐ» ՍՊԸ կողմից ներկայացված Արաբկիր վարչական շրջան Ա. Խաչատրյան փողոց 3/4, 3 ԿՋՀ և 1/5 բնակելի տուն հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Հ. Մկրտչյան